ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Սույն Հայտարարությունը հաստատված է Մրցութային հանձնաժողովի «2023/2» որոշմամբ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) հայտարարում է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ)՝

1. «Ապրելու երկիր» կուսակցության,
2. «Հայաստանի հանրապետական» կուսակցության,
3. «Հայրենիք» կուսակցության

2022 թվականի տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով:

Մրցույթի իրականացման կարգը և պայմանները սահմանվում են «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելվածով:

Մրցույթին մասնակցելու համար աուդիտորական կազմակերպություններին ներկայացվող պահանջները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 3-ով:

Մրցույթին մասնակցելու սահմանափակումները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 4-ով:

Մրցութային առաջարկների պատրաստման և ներկայացման կարգը, ներկայացման ժամկետը, ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 6-ով:

Մրցույթին մասնակցելու համար դիմումի ձևը սահմանվում է Որոշման Հավելվածի Ձև 2-ով:

Մրցույթի տեխնիկական առաջարկի ձևը սահմանվում է Որոշման Հավելվածի Ձև 3-ով:

Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման շրջանակները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 10-ով:

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին կառաջարկվի կնքել աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր: Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի արժեքը կազմում է

N	**Մրցույթի ծածկագիր**	**Կուսակցության անվանում**	**Պայմանագրի արժեք (ՀՀ դրամ)**
1	ԿՏՀԲՄԾ-2023/6	«Ապրելու երկիր» կուսակցության,	1 800 000
2	ԿՏՀԲՄԾ-2023/7	«Հայաստանի հանրապետական» կուսակցության,	4 200 000
3	ԿՏՀԲՄԾ-2023/8	«Հայրենիք»	1 800 000

Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը սահմանվում է Որոշման Հավելվածի Ձև 5-ով:

Սույն հայտարարությունը կազմվել է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.2-րդ հոդվածի, Որոշման և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Մրցույթի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Մրցույթի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Մրցութային առաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել ***ՀՀ, Երևան, Կորյունի փողոց 15*** հասցեով, թղթային ձևով, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 17-րդ օրը՝ ***2024 թվականի հուվարի 4-ը ներառյալ՝ ժամը 11:00-ը:***

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերենով:

Մրցութային առաջարկների բացումը տեղի կունենա ***ՀՀ, Երևան, Կորյունի փողոց 15*** հասցեում, 2024 թվականի հունվարի 4-ին՝ ժամը 11:00 -ին:

Աուդիտորական ծառայությունները պետք է մատուցվեն, իսկ աուդիտորական եզրակացությունները պետք է ներկայացվեն աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքումից հետո՝ առավելագույնը երկամսյա ժամկետում: